Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
մայիսի 25-ի N 275 - Ա
որոշման

«ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ COVID-19-Ի ԲՌՆԿՄԱՆԸ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Նպաստել COVID-19-ի բռնկմանը արձագանքելու ջանքերին՝ օժանդակելով բռնկման հետևանքով տուժած համայնքներին պահպանելու հասանելիությունը հիմնական սոցիալական ծառայություններին
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով
3.	Բարեգործը	Դանիական Կարմիր խաչի ընկերություն
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ մարզեր /Սյունիք, Տավուշ/ և Երևան քաղաք Բնագավառը՝ հումանիտար օգնության, առողջապահական և սոցիալական օժանդակության տրամադրում
6.	Ծրագրի բյուջեն	**33,890,000** դրամ /**61.395 Եվրո**/
7.	Բարեգործություն ստացողը	1500 միայնակ կենսաթոշակառուներ և հաշմանդամություն ունեցող կարիքավոր բնակչություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	16.04.2020 – 16.07.2020
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝ **1. Սննդամթերքի և հիգիենիկ պարագաների ձեռքբերում**

		1.1. Մննդամթերքի ձեռքբերում /բյուջե 14,250,000 դրամ, ժամանակահատված՝ 01.04.2020 – 30.06.2020/: 1.2. Հիգիենիկ պարագաների /փաթեթների/ ձեռքբերում /բյուջե 3,750,000 դրամ, ժամանակահատված՝ 01.04.2020 – 30.06.2020/ **2. Տրանսպորտային ծախսեր** 2.1. Բեռնատար մեքենաների ծառայություն (վարձակալություն) /բյուջե 500,000 դրամ, ժամանակահատված՝ 01.04.2020 – 30.06.2020/ 2.2. Բենզինի ձեռքբերում ՀԿԽԸ մեքենաների համար/ բյուջե 380,000 դրամ, ժամանակահատված՝ 01.04.2020 – 30.06.2020/ 2.3. ՀԿԽԸ մեքենաների սպասարկում /բյուջե 150,000 դրամ, ժամանակահատված՝ 01.04.2020 – 30.06.2020/ **3. Պաշտպանիչ պարագաների ձեռքբերում** 3.1 ՀԿԽԸ անձնակազմի և կամավորների համար դիմակների, ձեռնոցների, սանիտա-րական միջոցների (ալկոգել, հականեխիչներ) ձեռքբերում /բյուջե 11,140,000 դրամ, ժամանակահատված՝ 01.04.2020 – 30.06.2020/ Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 3,720,000 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքներ ձեռք բերելու, աուդիտ և այլ ծախսեր:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Մննդամթերքի և հիգիենիկ պարագաների ձեռքբերում, որի գումարը կազմում է 18,000,000 դրամ: 2. Տրանսպորտային ծախսեր, ներառյալ վառելիքի ձեռքբերում, մեքենաների սպասարկում, բեռնատարների վարձակալում, որի գումարը կազմում է 1,030,000 դրամ:

		3. Պաշտպանիչ պարագաների ձեռքբերում, որի գումարը կազմում է 11,140,000 դրամ: 4. Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 3,210,000 դրամ, որը ներառում է գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռք բերում, աուդիտ և այլ չնախատեսված ծախսեր:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 3,720,000 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքներ ձեռք բերելու, աուդիտ և այլ չնախատեսված ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ երկու մարզերում և Երևան քաղաքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, մարզպետարանների, թիրախային համայնքների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ Դանիական Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում, իրականացվելու է արտաքին աուդիտ: Նաև ՀՀ Կառավարության 2003թ. հունվարի 16 N66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ